

Այս գրական շարժման հարազատ ծնունդն ու միանգամայն անոր է՛ն արդիւնաւոր գործաւորներէն մէկն է Գրիգոր Զօհրապ, որ յայտնուեցաւ գրական զանազան սեռերու մէջ, գրելով քննադատական յօդուածներ ու քրոնիկներ, նորավէպեր, հրապարակագրական յօդուածներ եւ հուսկ ուրեմն բանաստեղծութիւններ: Անկարելին է ուրանալ սերտ ինամութիւնը որ կայ հեղինակին տաղանդին այս զանազան երեսներուն մէջ, որոնց մին միւսը կը բացատրէ յաճախ: Ես պիտի քննեմ սակայն այստեղ վիպագիրը միայն, որուն հազիւ թէ կը բաւէ արդէն ժամանակս:

Զօհրապ, իբրեւ նորավիպագիր, խորքով զուտ պոլսահայ է, մինչ ձեւը ֆրանսական է եւ իրապաշտ: Արուեստը, որով Զօհրապ կը պատկերացնէ իր նորավէպերուն նիւթը, կատարելութեան կը հասնի, եւ աւելի կ'արժէ, ըստ իս, քան բուն իսկ նիւթը: Իր ոճը կտրուկ, թափանցող եւ հրապուրիչ է: Ոճերը իմ աչքիս մարմիններու պէս կ'երեւան. Արփիարի ոճը թուլիկ է, եւ Զօհրապի իսկ բառով՝ տժգոյն. Բաշալեանինը՝ ողորկ է եւ աւինոտ. Կամսարականինը՝ ջղուտ ու քիչ մըն ալ շպարուած, իսկ Զօհրապինը՝ համակ դնդեր, այնպէս որ երբ կը կարդաս իր մէկ էջը, կը կարծես տեսնել գեղեցիկ կնոջ մը քալումը, լեցուն ու թրթռուն բարձերով:

Զօհրապ գրագէտ ըլլալէ առաջ փաստաբան է, իսկ անկէ ալ առաջ երկրաչափ էր: Երկրաչափ Զօհրապը իր հետքը թողած է գրագէտ Զօհրապին մէջ, որ անշուշտ մասամբ ատոր կը պարտի չափի եւ յստակութեան այն հզօր դրոշմը որ կը յատկանշէ իր գրականութիւնը: Փաստաբանութիւնը եւս իր առանձնայատուկ տեղը ունի գրագէտ Զօհրապին մէջ. իր նորավէպերը շատ անգամ պաշտպանողականներ են՝ կարծես հասարակութեան սիրտին խօսելու կոչուած:

Զօհրապի նորավէպերը հոգեբանական գրուածքներ չեն ինչպէս Պուոժէինը, սակայն իր հերոսները բոլորն ալ հոգեբանօրէն ճիշտ են: Ան շատ անգամ բառ մը միայն կուտայ, փոխանակ ամբողջ վերլուծման մը, եւ ահա խորապէս կը ճանչնանք, կը հասկնանք իր ներկայացուցած տիպարը: